

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խաւարանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժողովրդական գրադարաններ և ընթերցարաններ. «Տարագ» հանդէսի պատասխանը «Արձագանք» շաբաթաթերթի խմբագրին. Նամակ Նոր-Բայազետից. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խօշորան Եւրօպայում. Արտաքին լուրեր. ԽՈՒՆԻ ԼՈՒՐԵՐ. Հեռ-Ա.Գ.ԻՆԵՐ. ԲՕՐՍԱ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հասնա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ ԵՒ ԸՆԹԵՐԿԱՐԱՆՆԵՐ

I
Գրադարաններ և ընթերցարաններ մեր մէջ ունեն մի փոքրիկ պատմութիւն, և այդ օգտաւէտ հիմնարկութիւնների պատմութիւն ուսումնասիրողը պարզ կերպով նկատում է, թէ ինչպէս կարճ միջոցում ոչ թէ միայն ժողովրդական գրադարանների և ընթերցարանների դադարաւոր արժանիքը և ընդունելութիւնը գտաւ, այլ և սկսեց իրականանալ...

Այս էջերի մէջ մենք շատ անգամ առիթ ենք ունեցել խօսելու ժողովրդական ընթերցարանութեան և դրա հետ սերտ կապ ունեցող ժողովրդական գրադարանների և ընթերցարանների մասին: Անկասկած ժողովրդի մտաւոր դարձացման բարեկամներին մեծ ուրախութիւն պատճառած կը լինեք, եթէ մասնաւոր անհեղ ասի փաստի վրա, որ վերջին ժամանակներս ոչ թէ միայն մեծ քաղաքներում, որտեղ խմբած են խնայողներ, այլ և փոքրիկ քաղաքներում, և նոյն իսկ գիւղերում գրադարաններ և ընթերցարաններ հիմնւում են:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԱՀՆԱ

(Թիւրքահայերի կեանքից)

Գ.

Խոստ գաւառի հարաւային մասի կարեւոր գիւղերից մէկն էր Բաղրի գիւղը, չինված ապառաժների միջակայքում— ընտելեան վայրենութիւնների մէջտեղը, կողքից ունենալով Ս. Դանիէլ գետովը, որը ոռոգում է Ա. Լուրդ գետի դրաւը: Առանձին ընդարձակ մարդագետիկը, բարեբեր դաշտերը և յաճախ յորդելով շատ անգամ լրացնում է շահնաւների կատարած անգլիկանները: արեւելք և իր հետ տանելով կաւերի կէսը...

Բայց դաշտերը այնչափ ընդարձակ, այնչափ արդաւանդ են, որ գիւղացիք շատ տարի չը գիտէին ինչ անել իրանց ցորենը... տալիս էին շահնաւին տանապատիկ, մի կողմ էին դնում իրանց ձմեռվայ պաշարը, աշնանային և գարնանային սերմնացոյց, իսկ փնայեղը բնուրի կողմէն ձաղաք էին իջնցնում ծախելու, տալիս էին տուրքերը, տալիս էին մասնաւոր պարքերը... Այո, ունենում էին նրանք այդչափ բերք, մանաւանդ այդ տարին, որովհետեւ մինչև իրանց սահմանը այլ ևս մի թիղ տեղ անաչակ չէին թողել— մինչև իսկ ցանել էին Ա. Լուրդ գետի մարգագետինի մի մաս՝ սկսելով այնտեղից այնպէս աշուղտ ծաղիկները և աչք առնելով կրելու Հիւսէյն էֆենդիի հայտնաբերումը, որովհետեւ այդ էֆենդին սիրում էր մարդագետիկը, նրա միջի ծաղիկների հոտը և համարեւս սեփականացրել էր նրա միջից արտադրված խոտը և բանջարները...

Այս տարի քաղցիկիցը ունեցան շատ առատ բերք. հնձեցին, կալսեցին, ցորենը դիպեցին, յարդը

նկու հարցը—հերթական հարցն է տեղական խնայողներ և երիտասարդութեան համար:

Տարեւոյ տարի ոչ թէ միայն շատանում է եղած գրադարանների և ընթերցարանների թիւը, այլ դրա հետ միասին մեր գրադարան-ընթերցարանները սկսում են ընդունել այնպիսի ձև, որ կարող են բուն ժողովրդական կոչվել, և բաւական տարբերվում են առաջ հիմնված գրադարան-ընթերցարաններից:

Սրանից տարիներ առաջ գաւառական դասական քաղաքներում հիմնված մի քանի գրադարան-ընթերցարաններ, որոնք սովորաբար կոչվում էին հասարակական ընթերցարաններ, մեծ մասամբ տեղացի հարուստ խնայողները դասակարգել համար էին: Ընթերցարանի մէջ մուտք ունենալու համար հարկաւոր էր մի յայտնի վճար տալ, մօտաւորապէս հինգ ռուբլի: Վերջին ժամանակներս այդ հասարակական գրադարան-ընթերցարանների վրա աւելանում են համարեա թէ նոյն ընտելութիւնը ունեցող գրադարան-ընթերցարաններ, որոնց հիմնադիրներն են կովկասեան Հայոց բարեգործական ընկերութեան տեղական ճիւղերը: Գրանցից օգտվելու իրաւունք ունեն սովորաբար ընկերութեան անդամները, որոնք պէտք է վճարեն հինգ ռուբլի:

Այդպիսով ուրեմն մինչև այժմ գոյութիւն ունեցող այդ ընթերցարանները սկզբում մեծ մասամբ էին հասարակական և նախապէս ընթերցարաններ, զոր խաւարապէս տեղացի ունեւորները համար, և ապա սկսեցին հիմնվել Բարեգործական ընկերութիւնների ձեռքով գրադարաններ՝ գլխաւորապէս ընկերութեան անդամների համար: Տեղացի շուրհուր, աղքատ ժողովուրդը հաւանականաբար այդ գրադարանները մուտք չէր կարող ունենալ: անդամակցական վճարի մեծութեան պատճառով: Եւ ապացոյցի կարօտ չէ, որ օրինակ հինգ ռուբլի մի այնպիսի վճար է, որ շատերի առաջ

ժողովեցին և ուրախութեամբ սպասում էին շահնաւին, որ զար ցորենի տասանորդը առնէր և թողնէր իրանց մնացեալ մեծ քանակութեամբ բերքը քաղաք տանել:

Առաջին երեք օրերում գիւղացիք ուրախ էին. նստան հաշիւ տեսան, որ կուենան աւելորդ փող իրանց ընտանիքի համար հաղուստ գնելու. ուստի և իշան քաղաք, նրանցից իւրաքանչիւրը գտաւ իր ծանօթ վաճառականը, պատմեց նրան իր հողի առատ բերքի մասին, գնեց հաղուստ և խոստացաւ փողը վճարել տաս օրից յետոյ:

Որովհետեւ ամենաշատը, տաս օրից յետոյ շահնաւի կը գար իր տասանորդը կանէր և թող իր տար գիւղացիների իրանց բերքը քաղաք տանելու, հոգ անգամ չէին անում, երբ տեսան, որ շահնաւի ծառան մի փայտէ դա ջ (կնիք) ձեռքին, եկաւ դիմել տուաւ ցորենը և յարդը և ամեն կողմից դա ջ և գ (կնիք):

Անցաւ մի շաբաթ. շահնաւի ծառան թէ և գիւղի ճէհայի տանը ընկած ուտում—խմում էր, բայց դեռ ևս ոչ շահնաւական մասն էր վերցնում և ոչ էլ թող տալիս դէպքերը շարժելու—Օմար չափուշ, ասում էին գիւղացիք—ախր ժամանակն է ցորենը ժողովելու... Աստուած մի արասցէ, եթէ մի անձրեւ դաջ, մենք էլ աղան էլ կը վնասվենք...

—Ես ինչ անեմ, պատասխանում էր ծառան—աղային պիտի սպասենք, այդպէս է հրամանը...

Գիւղացիք կարեցին իրանց ապաւիկ հագուստները, հագան (գուցէ չուտով էլ մաշէին), պարեցին, երգեցին, ամեն անգամ երբ խոշոր դէպքեր չուրջը պար բռնեցին՝ շնորհակալ եղան Աստուծոյ և համբերութեամբ սպասեցին շահնաւին: Չէ որ անպատճառ պիտի գար աղան, ոչ ոք կասկած չէր տանում:

—Երեկ աղան գրադված է, ասում էին մի քանիսը:

—Երեկ չըղում է դնացի, ասում էին այլք:

պէտք է փակել ընթերցարանների դռները:

Հետաքրքրված լինելով այդ հարցով, մեր ձեռքի տակ ունենք այդ գրադարանների և ընթերցարանների գործունէութեան մասին վիճակագրական թւեր,—այդ թւերը մենք մի ուրիշ առիթով երևան կը հանենք,—որոնք պարզ ցոյց են տալիս, թէ այդ ընթերցարանների յաճախողների թիւը շատ քիչ է եղել, թէ այդ գրադարաններից շատերը մինչև անգամ փակվել են: Փակվելու պատճառը եղել է ընթերցողների և բաժանորդների քիչութիւնը, և այն հանգամանքը, որ փոխանակ տարեւոյ տարի առաջ դնացի, որոնք աւելի են սահմանափակել իրանց գործունէութիւնը, չը գտնելով հետաքրքրվողներ ժողովրդի մէջ:

Այդ տեսակ ժողովրդի համար անապաւնի ընթերցարան-գրադարանների յատկանիշներից մէկն էլ այն է, որ դրանք ժողովրդական ընթերցարանութեան համար դժուր շատ քիչ ունեն, և իրանց պահպանումը լցնում են մեծ մասամբ այնպիսի գրքերով, որոնք մատչելի կարող են լինել բաւական մտաւոր պաշար ունեցող մարդկանց միայն: Կարգաւոր դրքեր սովորաբար չեն արվում տուն տանելու համար, և այդպիսով ընթերցարան յաճախողները կազմում են այնպիսի մարդկանց մի շրջան, որոնք աղատ ժամանակ ունեն, պարապ են, գալիս են հետաքրքրվելու, թէ լրագիրներում ինչ կայ, և որոնց համար ընթերցարանը մի տեսակ ժողովանդի է դառնում:

Այդպիսով ասա վերև յիշած հասարակական ընթերցարանները թէ գնի թանգութեան, թէ ժողովրդին մատչելի գրքերի քիչութեան, և թէ վերջապէս իրանց ներքին կազմակերպութեան պատճառով՝ չէին կարող և չը կարողացան էլ գրաւել ժողովրդի ջրաւոր դասակարգերը, չը կարողացան իրանց համար ընթերցողներ գտնել արհեստաւորների, մանր վաճառականների, մշակների, գործակատարների, աշակերտների և կանանց շրջանում:

—Երեկ հիւսնդ է, ասում էր քահանան:

—Չբռնում է, փայտում էր վարժապետը:

Ճշգրտութիւնը այն էր, որ Հիւսէյն էֆենդիի բարեկամները նուազածուներով հանդերձ էրդուրմից եկել, իջել էին Նահա գիւղի վրանների տակը և լեռները թնդացնել էին տալիս Աղաբաբի քաղաքից թիւրքի և իրանց տղամուկներով: Կանանքի Հաջին անգամ էր մեղի եղանակներ, թիւրք կանայք և Ալմադուր պար էին բռնել եկեղեցու կողքի այդ շքեղ պարտիզի մէջ, Աղաբաբը կլկկացնում էր իր նշանաւոր «աղամ», աղամ—ով սկսող և Ուսեֆ կոչվող եղանակը, Մահմուդ պան թիւին տուած բարձրի վրա, չըլապատած ներքիցի ծուխով ձեռքով թանձր սուրճը, դանկում էր մի տեսակ պակշտ արեւցութեան մէջ. պօղսեցի էֆենդին տաքացած՝ «չաւք իշաներ էր երգում իր սիրամարդի ձայնով, կանանքի հաջին անգամ վշ ա իս ա ն է» եղանակով և իր գիւ ձայնով պարտիզի պատերի մօտն էր հաւաքում գիւղացիներին, որոնք պատկառանքով և գաղտնադրի դուրսնաւում էին աղաների այդ շքեղ թէֆլով... և որովհետեւ երկուսն ժամկէտով թեան ժամանակն էր, գիւղական քահանան աշխատում էր աւելի շատ ցած ձայնով իր երգեցողութիւնը կատարելու աղօթատեղիի մէջ, որպէս զի միւսնալմանների թէֆլ խառնել չը կարողանար «գեաւաւորական աղօթքներով»...

Ինքը—պարտիզի տէրը, աղաների բարեհաճ կամքով, եկել նստել էր վրանի բաց դռան առջև ծնկների վրա, գիւղացիների տները դատարկում էր կարագ, սեր, մեղր և այլն բերելով. պարտիզի դրսում գիւղացիներից մէկը մի ոչխար մորթել, իրանվածի շիշերն էր դարձնում կրակի վրա, մի այլ կողմում գիւղացի կանայք փրան էին եփում, իսկ իրենցիկ կտուրների վրայից կամ պարտիզի ցած պատերից միւս գիւղացիք աշխատում էին տնտեսելով դոնէ մասնակցել այդ թէֆլին, որը ասա մի շաբաթ էր, որ սկսվել էր և անընդհատ շարունակվում էր:

Հարկաւոր էր ուրեմն նոր կազմակերպութիւն տալ գրադարանական գործին, որպէս զի կարողանային կազմակերպվել ժողովրդի բոլոր շրջաններին մատչելի բուն ժողովրդական գրադարաններ: Փորձեր արդէն եղել են և մենք միւս անգամ կը խօսենք այն տեսակ գրադարանների մասին, որոնք իրանց կազմակերպութեամբ մատչելի կարող են լինել բուն ժողովրդին, և որոնց հիմնել և բազմացնել անհրաժեշտութիւն է մեզ համար: Խ. Մ.

«ՏԱՐԱԶ» ՀԱՆԴԻՍԻ ՊԱՏԱՍԻՐԱՆԸ «ԱՐԶԱԿԱՆ» ԴԱՐԱՆԱԳԻՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր գործունէութիւնը և աշխույթիւնը, որ դուք, կուրացած սե նախանձից և ձեր թերթի շատափոյթ կործանմանը մեծ ու հոգի դէնք համարելով՝ վստահութիւն էք ունեցել մեզ գրական աֆէրիստ անուանել, խնդրում ենք ասեք, որտեղ և ինչպէս է կայանում մեր աֆերիստութիւնը:

Արդեօք մեր բաժանորդներին խաբել ենք, բաժանորդագները ժողովել և երկու ու կէս ամիս չը հրատարակել համարները: Արդեօք ընթերցողներին խաբել ենք և սպարաւատէր պ. Մարտիրոսեանցին թերթի տպագրութեան ուշանալուն պատճառ բռնել, իբր թէ նրա նոր մեքենաները չեն եկել և հին մեքենայումն էլ տպագրելու անկարելի համարել: Թերթի համար թիւով ենք առել և վճարը տարիներով ուշացրել ու մինչև օրս էլ չը վճարել, պահանջած ժամանակն էլ ազնիւ խօսք ենք տուել այս ինչ ժամանակ վճարել, և վերջը, ի հարկէ, խաբել, չէնք վճարել: Տպարանում տարիների ընթացքում թերթը տպագրել ենք և վճարը չենք տուել ու վերջը թերթը դրաւ դրել տպարանատիրոջ մօտ: Խոստացել ենք մեր ընթերցողներին, որ խօսքի հետ դուրսնալու

նակվում էր:

Հուտով մի քանի գիւղացիք գետնի վրա—ծառերի տակ փռեցին կարպետներ, դրին ախտներ և ընթերթի պատրաստութիւն տեսան ըստ հրամանի Հիւսէյն էֆենդիին...

Պարը դադարեց, կանայք տեղ բռնեցին հիւսէյնի կողքին, Ալմադուր Մահմուդ աղայի մօտ, իսկ Հիւսէյն էֆենդին հրամայեց քէհային, որ գիւղացիներով մի պար կազմէ իրանց ախտավոր բաւալու համար:

Հուտով քէհան մի խումբ գիւղացիների լեցրեց պարտիզի մէջ. Աղաբաբը գիտէր գիւղական պարերգիներ անել. չըլանը կաղնիկեցաւ և աղաները պարը դրանքով սկսեցին ուտել:

Նախ մատիկայի գաւառները հինգ—վեց անգամ պտտեցին սեղանի շուրջը. կանկեց մի քանի շիշ խորոված, որից յետոյ Մահմուդ աղան ժպտալով ասեց Հիւսէյն էֆենդիին.

—Չեմ մոռանայ այս քէֆը... ամեն ինչ կատարեալ է այստեղ...

—Էլ ուրիշ ինչ որ հրամայեք, կը կատարվի, ասաց Հիւսէյն էֆենդին խոնարհաբար—միայն թէ դուք միշտ գոհ լինիք:

—Շատ գոհ եմ... տեսնում ես, որ աւելի քէֆից, քան թէ գինուց արբել եմ... բայց, աւելացրեց նա դէմքը թթուցնելով—այս կանայք այլ ևս զգուշիկ եղան...

—Եթէ կը հրամայեք, ուղարկեմ քաղաքից նորերը բերելու:

—Ո՛չ, ո՛չ... ասաց Մահմուդ աղան և այնպէս մի ակնարկով նրան նայեց, այնպէս խորհրդաւոր մի ժպիտ ցոյց տուաւ, որ Հիւսէյն էֆենդին ամեն ինչ հասկացաւ. ինքն էլ ժպտաց, բայց փոքր ինչ մտածեց և

—Շատ դժուար է, աղա, ասաց լրջութեամբ:

—Հէնց դրա համար էլ շատ քաղցր կը լինի, ծիծաղեց աղան:

—Տեսնեմք, միմայ էֆենդին մտադրաւ:

և պատկերը պիտի տանք ու խաղել ենք մեր ըն-
թերցողներին, ինչ կըլինէր մեր թերթը դար-
պարելով: Բանկում վաճառականներին մուրհակ
ներկայացնելու առաջարկել ենք արդեօք մեր
թերթին բաժանորդ գրվել: Քաղաքներ ենք
թափառել և դռնէ դուռ մուրացկանների պէս
բաժանորդներ հաւաքել մեր թերթի համար: Բան-
կերում տանեալ հազար պարտքերի վճարման
փոխարէն՝ առաջարկել ենք, արդեօք, մեր յայտա-
բարութիւնները վճարող պարտքն ապահովացնել:
Բանկում դիրեկտոր ենք ընտրվել ու մեր հսկողու-
թեանը յանձնարած գումարները վեր առել հարկեր
հազարով ու վերջը հրապարակի վրա դրել խն-
դիրը՝ որ մեր պարտքը ընծայվի մեզ: Բանկում
դիրեկտոր ենք ընտրվել և անդամներին փող
տալիս՝ պահանջել ենք по дружески одолжить до
сентября 1000 рублей. Հոգաբարձու ենք ընտր-
վել և ուսուցիչներին խորհրտացել՝ եթէ մեր թեր-
թում չը գրեն, մեր ասածը չանեն՝ պիտի վրձնու-
վեն: Հասարակական փողեր՝ Ս. Էջմիածնի, Ամբ-
րուսի տեղի, երկրագործական ուսումնարանի,
Լուսնա դանձանակի համար փողերը արդեօք մեր
ձեռքն է եղել ու հաշիւ չենք տուել ազգին թէ
ուր են այդ փողերը: Բանկից ուժիկ ենք ստացել
ու խոտովել որ մեզ տանեալ հազարներ չեն
ընծայել ու ամիսներով չենք գնացել ծառայու-
թեան: Բաժնիքի պէս հողիմակին խաբէլ ենք,
մեզ աշխատակցել և յետոյ նրա վարձատրութիւ-
նը մինչև այս օր էլ նրա որբերին չենք հասցրել:
Ինչ գործ էլ որ լինի, հատարական թէ մասնա-
ւոր, ստանձնածնրս փչրել, խորտակել, մեղցրել
ենք: Բազուկից ուսանողներին հասցնելու համար
փող ենք ստացել և կէսը մեր գրպանը դրել ու
կէսը հասցրել պատկանելոց:

Հերքեցէք, պ. Աբգար Յովհաննիսեան, հերքե-
ցէք, ասեցէք որ սուտ է, դրապարտութիւն է և
այս հայերու մէջ ձեր պատկերը չէ երևում. իսկ
եթէ դուք քաջութիւն չունենաք մի առ մի հեր-
քել այս առաջ բերածնրս, այն ժամանակ թող
տուէք անուանել ձեզ այն անուանով, որին արժա-
նի էք, սակայն լսելիս՝ շատ նեղանում էք:

Տիրքան Նազարեան

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ

Յունիսի 10-ին

Այս տարի թէ և վաղորդ գարունը բացվեց և
տեղական հողագործները շուտով վերջ տուին ի-
րանց ցանքներին, բայց անձրև չը լինելուց և ե-

- Բայց տես, սպանաց մատով աղան—սիրու-
նը պիտի լինի...
- Տեսնենք:
- Տեսնելու բան չը կայ, նորէն ժպտաց աղան
յուզմամբ—այսօր պէտք է դանես... քէհեային
հրամայիր...
- Վախենում եմ աղմուկ հանեն և ձայնը
փաշային հանի:
- Մահուդ աղան ուղղվեց, նստեց, ձեռքը
դրեց Հիւսէյն Էֆէնդիին թևին և ասաց խորխո
ձայնով.
- Մի անգամ ընդ միշտ գիտցիր, Հիւսէյն, որ
Մահուդ աղան եթէ ցանկանայ, Մուստաֆա
փաշան չէ՛ք չի ասի...
- Գիտեմ, գիտեմ, աղան, շտապեց ասել Էֆէն-
դին—բայց...
- Ինչ բայց է այդ, դէմքը խոժոռեց աղան—
մերժում ես ինձ, որ այնքան լաւութիւն եմ ա-
րել քեզ.
- Դժուրակալ եմ, աղան... քաւ լիցի, որ մեր-
ժեմ. բայց յետոյ ինձ կը ներգոյնեն:
- Քո ներգոյնելը կը վարձատրեմ... կուզես որ
ամբողջ խնուսի շահապաշտութիւնը, նոյնն է թէ
խնուսը լիովին քեզ տամ...
- Հիւսէյն Էֆէնդին ուրախութիւնից դողաց.
- Աղան, դուք նա դողը ջուռն ձայնով—Ինչով
եմ արժանի:
- Կամքս կատարել, ասաց միծանձնութեամբ
աղան—և ամբողջ խնուսը քոն է...
- Այդ միջոցին պոսեցի Էֆէնդին, որը սեղանից
կըստ պարտիկից դուրս էր գնացել, մի բարձրա-
ձայն քրքրելով ներս մտաւ, պարտեղը քաշ տալով
իր հետ դիւղական ծերունի քահանային, որը
աղաչում և արտասուք էր.
- Լսիր, դեռուր փափազ... որոտաց նրա
վրա Էֆէնդին—Խո քեզ չենք մորթելու... մի
դաւաթ օղի խմիր և դնա:
- Եւ քաշ տալով նրան, մտնեցրեց բազմոցներին:

դանակի տաքութիւնից համարեա խեղճ հողագոր-
ծի վերջին յոյսերն անհետանում են: Երբեմն եր-
բեմն երկնքն ամպում է այնպէս սաստիկ, որ
ժողովուրդը կարծում է թէ անպատճառ յորդառատ
անձրև կը գայ, և նրանից հեղեղ կառաջանայ,
բայց դժբաղդաբար յանկարծ բարձրանում է ամե-
նի հողը և երկնքի վրայից մութն ամպերը ցրե-
վում է: Վաղուց է, որ անձրև չէ եկել և սրա պատ-
ճառով էլ թէ հացաբոյսերը և թէ սարերի կա-
նաչ խոտը անցնալ տարիներին նման չեն աճում:
Նոր-Բայազէտի ամբողջ գաւառում և մեծ մասամբ
քաղաքին մէջ ընակիւնները պարապում են հողա-
գործութեամբ, որից աւելի օգուտ են քաղում,
քան թէ առևտրից: Եթէ այսպէս երկար տեւ
այս տեսակ պարզ եղանակը և անձրև չը գայ,
այն ժամանակն անհամար զիւսներ կը կրէ հո-
ղագործը:

Առևտուրը վերջին աստիճանի ընկած է, այնպէս
որ վաճառականներն անց են կացնում դարբակա-
բանութեամբ և իրանց խանութներում ննջելով:
Բայց սրանից յետոյ առևտուրը կարող է փոքր ինչ
ոտքի կանգնել, որովհետեւ դանադան գաւառներից
մարդիկ իրանց անասուններով ամառանոց են գալիս
Նոր-Բայազէտի գաւառի Աղբիւշ և Աղմաղան աս-
ված արօտատեղերում և այդտեղից էլ խումբ խումբ
գլխով ալտուդ՝ գնում են իրանց համար պիտա-
նի ապրանքներ, բերելով իրանց հետ վաճառելու
խուր, պանիր, բուրձ, ուղիւսներ և խոշոր անա-
սուններ:

Աչքի առաջ են ընկնում տեղիս վաճառանոցում
մի քանի քաջաբալած խանութները աւերակներում
դիրված մարդկային անմարդութիւնների կոյտերը,
որոնցից այժմեան տօթ եղանակներին այնպիսի
աստիճան դարձա՞նտութիւն է փչում, որ օդը վա-
րակելով վաճառանոցում անց ու դարձ անող
մարդկանց դուրսից անտանելի է դարձնում:
Տեղական օտարխանութիւնը, ինչպէս երևում է,
ուշադրութիւն չէ դարձնում այս աղետալութիւն-
ների վրա, որովհետեւ անցնալ օդ տեղիս պ. հաշ-
տարար դատարան անձամբ ինքն էր մի առ մի
նկատում այդ խանութների աւերակներում երկար
տարիների ընթացքում դիրված անմարդութիւն-
ները և իւրաքանչիւրի տիրոջ վրա արձանագրու-
թիւններ կազմելով ստիպում էր անմիջապէս մա-
քրել բոլոր կեղտոտութիւնները: Այսպէս ուժն ար-
ձանագրութիւններ կազմեց մարդութեան կանոնը
չը պահպանողներին պատժելու:

Տեղիս հողերը երկսեռ ուսումնարանների աշա-
կերտների և աշակերտութիւնների հարցաքննութիւն-
ները սկսվելու էին այս տարի յունիս ամսի մէ-

- Էֆէնդիներ, ծիծաղելով գոչեց նա—ձեզ մի
ջնջէ՛վէր եմ բերել...
- Զրեց քահանային առաջ, յետոյ հրամայեց Աղա-
բաբին մի լաւ պարերդ անել և դուչեց.
- Պարիր, փախա՛ղ, թէ լաւ պարես, մի դու-
րուչ և մի գաւաթ օղի էլ կը տամ քեզ...
- Աստուծու սիրուն, աղաչեց քահանան արտա-
սուսից ձայնով—խնայեցէք իմ հասակին, ես
պարել չը գիտեմ... և հնկեկաց:
- Չայիր, գեաւիւր... սուտ ես ասում, ինչու
ձեր եկեղեցու մէջ այն մեծ շորը վրադ ձգած
պար ես գալիս միշտ... դէհ, չուտ, պարիր, ապա
թէ ոչ, մօրուքը անիւն կը տամ...
- Պարիր, պարիր, քահանայ, ծիծաղեց Հիւսէյն
Էֆէնդին—պարիր որ փող ստանաս:
- Էֆէնդի, դիւրի՛ղ դուրբան, դուչեց քահանան
— ես պար գալ չեմ իմանում...
- Պոսեցի Էֆէնդին համբերութիւնը հասաւ,
նա բռնեց քահանայի մօրուքից, ոտքի կանգնեց-
րեց, յետոյ «այ պապէս» գոչելով սկսեց կատարել
չրջաններ բարձել տալ նրան և երբ խեղճ ծերու-
նին ուժաւորեց դեռնին էր ընկնում, Էֆէնդին
ձեռքում թողնելով իր մօրուքը մաղերից մի մեծ
փունջ.
- Տեսա՞ր... դուչեց Էֆէնդին մի կից արձակելով
դէպի նա—այդպէս կը պարեն, անխախտ... դէհ,
վեր կաց այս գաւաթը դատարկիր և կօրսուրի
այտնուրդից...
- Եւ այդ ասելով, տուաւ նրան մի գաւաթ մաս-
տիկա...
- Գ.
- Հիւսէյն Էֆէնդին ինչո՞ք, որը տեսեց ամբողջ
տաս օր, վերջացաւ: Կանոնով Հաջին, քաղաքի
ածող Աղաբաբը, որոնք երկուսն էլ հայեր էին,
լաւ ընծաներ ստանալով՝ էրզրում մեկնեցան,
Մահուդ աղան միծամեծ խոստումներ անելով
Հիւսէյն Էֆէնդինին, չը նայելով հանցանք գոր-
ծած աղմուկին, դուրը թողեց իրան մի գիշեր

կից, բայց հողերը իշխանութիւնը յետաձգեց մին-
չև ամսիս տան և հինգը, առաջադրելով թէ հար-
ցաքննութիւններին հողերականութեան կողմից
ներկայ լինելու է սաների ուսման առաջադիմու-
թիւնը գնահատ համար տէր-Վահան Տէր-Յովհան-
նէսեան:

Նոր-Բայազէտի գաւառում աւազակութիւնները
և մարդապահութիւնները մինը միւսի ետեից
յաճախ կրկնում են, ուստի այս բարբարոսու-
թիւններին վերջ տալու համար յերանի պ. նա-
հանգապետի կարգադրութեամբ նշանակվել է այս-
տեղի գաւառապետի օգնականի պաշտօնով Էջ-
միածնի գաւառի առաջին բաժնի պրիստա պ.
Գարանուիչ, որը, ինչպէս պատմում են, գործու-
նեպ և քաջ պոլիցիական է: Յուսով ենք, որ պ.
Գարանուիչ թէ մեր հասարակութեան և թէ իսկ
պ. նահանգապետի կարծիքը կարգադրեց:

Մ. Վ.

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐԻՆ

Վենեցիա, Ս. Ղազար 1/13 յունիսի

Պատուական տէր. իբրեւ հին ծանօթի և բարեկամի՝
աւելի քան շատերու հնորատուութիւնները ձեր
հեռագրածն ընդունեցայ մտերմաբար. ոչ այնքան
ինձ պատիւ, որքան հասարակաց ուրախութիւն
համարիմ որ յօբելինիս յիշատակն ազգային
տօն ասլամբութիւն կանոնադրեց: Ուրախ եմ և
ես ընդ ազգայնոց արդիւն և անախտանձ զգաց-
մանց, մանաւանդ ձեր խմբագիր ընկերաց, որոց
իւրաքանչիւր ըստ բարի դիտմանց բարխ մաղթելով,
մնամ հնորատուութեամբ անոնց և ձեզ

Խ. Ժ. Հ. Ղազար Մ. Ա. ԻՇԱՆ

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐԻՆ

Բաղրևանդի Ս. Յովհաննէսի վանք

Յուսով եմ ձեր ներողամտութեան վրա, քանի
որ ես ամենից ուշ կը ձայնակցեմ այն մեծ տօ-
նին, որը տօնեց ամբողջ հայ ազգը ի պատիւ
քսան և հինգ ամեայ մտաւոր անկեղծ ծառայու-
թեանդ:

Օրհնում եմ ձեր այդ անձուէր ծառայութիւնը
և մաղթում առ Աստուած կրկնակի քսան և
հինգ ամեակի տօնելու:

Մնամ աղօթաբար վստի կենաց ձեր և ապա-
գայ աւելի արդիւնաւորութեանդ՝ առաջնորդ Բաղ-
րևանդի Ս. Յովհաննէս մենաստանի
Յունիսի 6-ին. Յովհաննէս եպիսկոպոս

դուրաճացող «Գեաւուր աղջիկը» և հեռացաւ,
խոստանալով միւս տարի նորից գալ այդ կողմե-
րը:

Հիւսէյն Էֆէնդին շատ ուրախ տրամադրութեան
մէջ էր գտնվում, սակայն մի քանի օր հանդիստ
առաւ և ապա թէ մտածեց փաղքիլ գնալ տա-
սանդղները հաւաքելու:

Դէմքը կնքելուց ուղղվ մի ամիս յետոյ, Հիւ-
սէյն Էֆէնդին իր Մուստաֆա չափուչի հետ փաղքիլ
մտաւ:

Անձրևային եղանակները սկսվել էին և դիւղա-
ցիք, որոնք արդէն սկսել էին տիրել և վախենալ
թէ ահա խնուսի սողորական հեղեղանման անձ-
րեւ և դիւղի կողքի Ս. Գանիէլ գետակը ամեն
ինչ մի քանի ժամկայ մէջ կոչնչացնեն՝ քիչ յոյս
առան, երբ շահան եկաւ: Իրար անցան, քէհեայի
սենեակը պատրաստեցին և ուրախանում էին, որ
շուտով պիտի կարողանային իրանց բերքը կալե-
րից վերցնել:

Հիւսէյն Էֆէնդին քէհեային հրամայեց, որ սա-
լերը և ձի կամ եղ պատրաստեն. յետոյ չափեց
մի կողմ դարսել տուաւ իր մասը և ամբողջ գիւ-
ղի մէջ որքան սալ, ձի, եղ, կամ էլ կար՝ բեռ-
նելով, իր չափուչի հետ քաղաք ուղարկեց:

Գիւղացիք սպասում էին, որպէս զի իրանց
սալերը և տաւարները վերադառնան, ուստի
իսկոյն իրանց տողարկների ծախքը կարեցին և
գիշերը հանդիստ զննեցին: Միւս առաւօտ տող-
արկները կը լցնէին ցորենով:

Կէս գիշեր էր արդէն, երբ յանկարծ մի աղ-
մուկ բարձրացաւ գիւղում, ամենքը դուրս թափ-
վեցան. լաց, կոծ տիրեց ամեն կողմ, գիւղացիք
իրանց կորցրել էին...

Երկնքը սև ամպերով ծածկվել, որոտում էր և
անձրևի մի հեղեղ ծեծում էր և լցնում կալերը,
իսկ Ս. Գանիէլ գետակը բարձրացել՝ դէպի կա-
լերն էր գալիս...

Յորենի դէմքը հեռուցեալ ցածանում էին և

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐԻՆ

Բազու 14 յունիսի

Քսան և հինգ տարի շարունակ դուք ձեր
կենսի մէջ անցկացրած իւրաքանչիւր ժամը
արդիւնաւէտ դարձրեք ձեր արիւնակիցների մէջ
գործելու համար: Արդիւնքը անկեր և է: Գործը
նշանաւոր դարձաւ հայերի կենսի բարեփոխու-
թեան համար աւելի այն պատճառով, որ ժա-
նակակիցների բազմութեան միջից դուք առաջին
էիք, որ բողոքեցիք հային բարոյապէս ու մտա-
ւորապէս նսեմացնող սպանող սովորութիւնները,
դէմ ու հարուածեցիք այդ սովորութիւնները, մի
և նոյն ժամանակ առաջին պաշտպան հանդիսա-
ցաք այն բոլոր միջոցներին, որոնք պիտի մօտեց-
նէին մեզ պէս ժողովրդին՝ կատարելութեան,
ներկայ քաղաքակրթութեան մարդակային դրութեան:
Այդ ամենը տեսաւ ու հասկացաւ հայ ժողովրդի
նշանաւոր մասը և արտայայտեց այդ իր համոզ-
մանը մայիսի 6-ի տօնին, որպէս յիշատակ ձեր
գործունէութեան: Ժողովրդի իւրաքանչիւր բարե-
կամը պիտի գնահատեմ նրա անկեղծ սիրով, ան-
վիճելի ու անկեղ գործի կենսի և գործը: Հէնց
այդ հիման վրա էլ մեր սրտի բուռն զգացմուն-
ով ցանկանում ենք ձեզ դեռ շատ ու շատ տա-
րիներ, որպէս ազգի և մարդկութեան պիտանի
անդամին:

Աննա Սարգիսեան, Սմբատ Սարգիսեան,
Կիսնց.

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐԻՆ

Նապոլի 2/14 յունիսի

Հայ երկիւր ամենից վերջն է հնորատուութեան
ձեր քահանայապետի գրական գործունէութեան
տարեդարձը: Եւ դա իր պատճառն ունի:

Սուկ հնորատուութեան բարոյական պարտքս ձեր
յօբելինի առթիւ եթէ իր ժամանակին էլ հասած
լինէին ձեզ, այնու ամենայն մի առանձին հո-
րութիւն չէին լինելու—գուցէ մի թող կրկնողու-
թիւն լինէր այն ջերմ զգացմունքների, որ հարկ-
բարձր հայեր արտայայտեցին ձեզ մայիսի 6-ին: Գա-
րդէն կատարված մի իրողութիւն է, որինչէնք
նաւ Եւրոպա, ամեն դասակարգի հայը մաս-
նակցել է: Այդ անկեղծ ցոյցը, համակրանքը՝ մի
օրինական գրական է, որով հայ հասարակու-
թիւնները գնահատելու չափ ձանաչել կարողացան
ձեզ պէս գրական աշխատաւորին, որը քսանհինգ
տարի շարունակ իր անխաղախ գրչով մի շարք

հացահատիկներ ու յարկ խոռոչ լողում էին կալերի
մէջ կալմով լճակների երեսին...

Յուսահատութիւն տիրեց ամենքին, թիւանք
բերին, տողարկները լցնել աշխատեցին... Եւ
գետը շոշափում էր դէմքը...

Հիւսէյն Էֆէնդին հանգիստ քնել էր քէհեայի
սենեակում...

Երբ լուսացաւ, գետը արդէն ծածկել էր կալե-
րը: Գիւղացիք ձեռները ծոցերին չընկապաւորել էին
մոռնող գետակը... ոմանք իրանց մաղերն էին
փետում, միւսները չընկ աղօթում էին արտա-
սուսից և աղամարդիկ տիրութեամբ դիտում
էին գետի երեսին լողացող հացահատիկները և
խոտի խորձերը, որոնց տակից ջուրը հաղւեւ էր
երևում...

Եւ աղաք կիսամերկ ճչում ու ջնքն անդամ
միաձայն այնպէս ոռնում էին, որ սարսուռ էր
ազդում...

Հիւսէյն Էֆէնդին այդ բոլորը տեսնելով՝ իս-
կոյն ձի նստաւ և քանի կարող էր շտապով՝ հե-
ռացաւ գիւղից:

Իսկ երբ սալերը և տաւարները վերադարձան
գիւղացիք բեռնելու այդ եւ ոչինչ չունէին...

Ուտելու պաշար իսկ չառնելին չէր մնացել և
եթէ այդ դրութեանը շարունակվէր, եղած տա-
ւարներն էլ կը սատկէին ձմեռը, որովհետեւ գետը
խոտերի գեղերից շատերն էլ տարել էր...

Միւս տարի եթէ մտնէք Փաղքիլ, նրա 100
տան փոխարէն միայն 43-ը կը գտնէք ողջ...
միւսները աւերակների մէջ թափառում են ցեղ-
իւր ջները, իսկ գիշերը՝ բուրբուր...

Իսկ իրանց Փաղքիլիցը պանդխտութեան քա-
ւաղանը ձեռք առել՝ Կ. Պոլսն էին գնացել...

Վ. Փափագեան

հարցերը և գծերը երկրի և ժողովրդի բարոյութեան ու բարգաւաճման վերաբերմամբ:

Եւ դուք, պ. Արծրունի, լրագրա-գրականական ասպարէզում, հայերի մէջ, առաջինն էք հանգիստնում, որ վաստակեցիք այդ փառքը: Զուր չեն անցել ձեր անդուլ աշխատութիւնները. տա-րիներ ընթացում քաջ երկրագործի նման վա-րկներ ընթացել վայրի, անջրի դաշտերը և, չը ընցիք, հերկեցիք վայրի, անջրի դաշտերը և, չը հանդուրժելով երաշտութեան, կարկտի, մորեխի և այլն աղէտների, աւելի խոր ակօս ձգեցիք ու միջ-ն անգամ ձեր արօրին խանգարող փառած ծա-ռերի արմատները տապալեցիք:

Արդէն պարզված է այն հարցը, որ պ. Արծրու-նի, Վշակ և հայ հասարակութիւնները միմեան-ցից անբաժան մարմիններ են:

Եւ ձեռք այդ կէտն է, որ ինձ առիթ է տալիս մասնանշել անել և շնորհաւորել ձեզ, յարգելի պ. Արծրունի, ոչ միայն ձեր գրական ծառայութեան յօրենքները, այլ և ձեր ունեցած կ ա տ ա Ր Ե Ա Ղ յ ա ղ թ ա ն ա կ Ի յ օ թ ե լ և ա ն ը: Եւ այդու ըն-դունեցիք ինդրիմ իմ կենդանագիրը, որպէս դո-զը նուրբ, ի հաւաստի ցերմ համակրութեան առ ձեզ ձեզ անձնուէր:

Ն. Շահլամեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր հայազգի երգիչ պ. Ն. Շահլամեան ու-ղարկել է մեզ խաղաղի հաղօլի քաղաքից իր լուսանկարը, գեղեցիկ շրջանակի մէջ դրված:

Շարաթ օր, ժամը 10-ին, խորհն արեւելիս ու-ստ Նար-Բէյ այցելութիւն տուեց Կովկասի կա-ռավարչական գեներալ-ադիւտանտ Հերմանտովին և պատիւ ունեցաւ ներկայացնել նրան պ. Վահ-րամ Մուրաֆեանցին, իբրև Սանասարեանցի յու-ղարկաւորութեան հանդիսում թիւրքաց հայերի աշխարհական ներկայացուցիչին:

Կիրակի, 17-ին յունիսի, տեղի ունեցաւ Միւր-տի Սանասարեանցի յուղարկաւորութեան հանդէ-սը: Հանդուրդեալ թաղվեց թիֆլիսի վանքի մայր-եկեղեցու գաւթում: Թաղմանը ներկայ էր ա-հային բազմութիւն, թիֆլիսի արհեստագործների բոլոր համայնքները և քաղաքի գրեթէ ամբողջ կնոթկիցէկցան: Բազմաթիւ պատկերներ ընդուն-նանդուցանելի դադարել վրա: Պատարագից յետոյ խորհն արեւելիս կայացաւ Նար-Բէյ մի զգացված ա-տենարանութիւն արեւ: Թեմիս առաջնորդ սրբա-դան Մամբրէ պատարագիչ էր:

Կեբձից մեզ գրում են: «Մայիսի 29-ին, Բեսա-րաբայի վիճակի թեմական տեսչի օգնական, Սիմֆերոպոլի աւագ քահանայ Օգեստիսիոս Կոպ-չակեանցի ներկայութեամբ՝ մեր հայոց դպրոցում հարցաքննութիւններ կը ան- և աշակերտներին միջանակներ բաժանվեցան: Ժողովուրդը շատ դո-մնաց աշակերտների առաջադիմութիւնից: Ան-հրաժեշտ է Կերչի հայոց վարժատան համար գրադարան ունենալ, բայց ուսումնարանի սուղ նիւթական միջոցները արգելք լինելով գրադարա-նի իրագործման, Կերչի հասարակութիւնը դիմում է մեր բոլոր հրատարակիչներին և հեղինակներին, ինդրելով որ չը գլանան յօգուտ այդ գրադարա-նի մի-մի օրինակ ուղարկել իրանց հրատարակու-թիւններից արժանապատիւ հայր Օգեստիսիոս Զուրաբեանի հասցեով:»

Մեզ գրում են Կեբձից, որ յունիսի 1-ից սկը-սած այդտեղ համարեա ամեն օր անձրև է գալիս: Զանգերը, մանաւանդ ցորենինը, այս տարի շատ առատ են լինելու:

Օրիստոնց մեզ գրում են, որ մայիս ամիսը շատ լաւ անցաւ. այդտեղ, բայց յունիսի 3-ից սկսած անընդհատ անձրևներ էին տեղում և եղա-նակը աշնան նման ցուրտ դարձաւ: Զոնիսի 5-ին, արեւգիւղի խաւարումն նկատելի չեղաւ Օգեստիսիոս, երկինքը ամպամած լինելով: Այժմ կղանակները կրկին տաք և պարզ են:

Ս. ԽԱԶ քաղաքից պ. Սիմէոն Սափարեանց խնդրում է մեզ տպագրել հետևեալը. «Ինձանից բոլորովին անկախ պատճառներով «Վարդա-փուշ» դիմում մատուցել տակ կը մտնի միայն նո-յն մեքեր ամիսը:»

Թիֆլիսի «Սրբ» տպարանում այս օրերս լոյս տեսաւ «Տարբերակ և օգի մասին» վերնագրով

գրքովը, թարգմանութիւն օրիորդ Աննա Խաչա-չեանցի: Գիրքը բովանդակութեան կողմից հետա-քրքիր և օգտաւէտ է, բայց ցաւալի է, որ մեր թարգմանիչները շատերը սկսել են կապիորէն ըն-դունել այժմ նոր մօ գ ա յ ի սխալ հայոց ուղղա-գրութիւնը: Բաւական չէ, որ վ տառի տեղ կի-տաբարաձայն և տառը սկսել են դործածել կրա-ւորական բայերի վերջաւորութեան մէջ, ինչպէս կը «տարած-ւի» և այլն, բայց և նոյն իսկ հա-յոց բառերի արմատները ուղղագրութիւնը սկսել են աղաւաղել. հայոց «նուէր» բառը սկսել են գրել «նըւէր» և այլն: Գրքովն արժէ 20 կօ-պէկ և ծախվում է թէ հայոց գրավածառանոց-ներում և թէ թարգմանչուհու մօտ, որին պէտք է դիմել այս հասցեով. Шуша, АННЪ ЮЗБАШЯНЪ.

Այս տարի թիֆլիսի առաջին գինեագիւղից ա-ւարտել են 37 հոգի:

Բաղուրի «Каспий» լրագիրը հաղորդում է, որ մի պարոն, Բ. անունով, ինդրել է տուել կառա-վարութեանը թղթաւորութիւն ինդրելով Բաղուրի հրատարակելու հայերէն մի թերթ «Վայրակ» ա-նունով: Լրագիրը պիտի հրատարակվի շաբաթը երկու անգամ, և պիտի ներթափվի գրաքննու-թեան թիֆլիսում:

Մեզ հաղորդում են, որ Էջմիածնի հոգևոր վար-չութիւնը մտադիր է հայոց դպրոցները բոլոր դասագրքերի տպագրութիւնը կատարել միմիայն Էջմիածնում:

Տրապիզոնից մեզ գրում են, որ այս օրերս Բասենի կողմերում մի ընդհարում է տեղի ունե-ցել հայերի և լուրերի մէջ:

Լուսն էնք, որ Պարիզի հայ ուսանողները ներ-կայումս ջերմ կերպով աշխատում են իրագործել աշտեղ վաղուց յղացած միտքը՝ հրատարակել մի հայերէն ամսագիր:

Կիրակի, յունիսի 17-ին, Էրնեստօ Բօստի տուեց իր վերջին ներկայացումը բանկի թատրոնում: Բօստի իր հրաժեշտի ներկայացումն համար ընտ-րել էր Ենթադրել «Համէտ» պիւսան: Հռչակաւոր ողբերգուի խաղի մասին աւելորդ ենք համարում խօսել, որովհետև մեր նախընթաց համայնքում մանրամասն խօսել ենք դրա մասին: Երբ ներկայացումը վերջացաւ, հասարակութիւնը աշ-պիտի ողբերգած ցոյցեր արաւ հռչակաւոր ողբեր-գովն, որոնց նմանք մինչք տեսած չէինք: Օ-թեաներից սկսեցին վարդեր և ծաղիկներ թա-փել Բօստի գլխին և անմիջ ծափահարել, կար-ծես հասարակութիւնը մտադրվել էր այդ գիշեր թատրոնից չը հեռանալ: Վերջ ի վերջոյ, Էրնես-տօ Բօստի ձեռքով նշան տուեց հասարակութեա-նը թէ կամուրջ է խօսել: Թատրոնում խորին լուռութիւն տիրեց. «Ես վաղուց երազում էի այցե-լել Կովկասի մայրաքաղաքը, —ասեց Բօստի, — և ահա կատարված տեսնելով իմ փափագս, չեմ կարող իմ անուն շնորհակալութիւն չը յայտնել այն սիրելի ընդունելութեան համար, որով պա-տուեցիք ինձ, Կովկասը սիրելի դարձաւ ինձ հա-մար մանաւանդ այն պատճառով, որ նա շատ նման է իմ սիրելի հայրենիքին — Խաղաղային: Յոյս ունեմ, որ շուտով կրկին կը վերադառնամ և կը տեսնեմ ձեզ, միտք բարեւ: Հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով և ողբերգած կեց-ցէներով պատասխանելով Բօստիին, սկսեց բեմ կանչել պ. Ֆորկատտին: Պ. Ֆորկատտի ևս իր կողմից ասեց, թէ այն օրից միայն հասկացաւ ինքն գեղարուեստի նշանակութիւնը, երբ ծանթացաւ Բօստիի հետ և տեսաւ նրա խաղը: «Կամենալով գեղա-րուեստական բաւականութիւն պատճառել թիֆլիսի հասարակութեանը, ասեց Ֆորկատտի, — որին ե-րեք տարի է արդէն կարողութեան չափ ծառա-յում եմ, հրաշքերից պ. Բօստիին: Ապա հասա-րակութիւնը մեծ աղմուկով և ցոյցերով ճանա-պարհ դրեց հռչակաւոր Բօստիին մինչև իր բնա-կարանը:

Ուրբաթ, յունիսի 15-ին, Օրթաճաղայում, Թաւմաշ չեանի այգիում, Թիֆլիսի հասարակութիւնից մօտ 50 հոգի ճաշ տուեցին Էրնեստօ Բօստիին: Ճաշը ունէր բուռն ասիական բնագործիւն և անցաւ շատ ուրախ կերպով: Խօսակցան մի քանի ճառեր, որոնց ինքն Բօստի մի գեղեցիկ ճառով պատաս-խանեց: Ճաշը վերջանալուց յետոյ լեզղինկա տա-րվեց. ինչպէս երևում էր պարը շատ դուր եկաւ հռչակաւոր հիւրին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՒՆԻՍԻ ԵՐԹՈՒՄԱՅԻՄ

Սպանիայում խօսերա է երեացել: Խօսերայով վարակվել են արդէն մի քանի տեղեր, և վարա-կի: Իհնանդութեան տարած դոններ քիչ չեն:

Մարդիկ սանիտարական բարձրագոյն վարչու-թիւնը վճռել է ձեռք առնել խօսերայի դէմ նոյն խիստ միջոցները, որոնք ձեռք էին առնված 1875 թւին: Պէտք է ասել, որ այդ խիստ միջոցները այն ժամանակ անկարող էրան խօսերայի առաջն առնելու, բայց ահապէս շեւս հասցրին երկրի առեւտրին և մի քանի նահանգների նիւթական գրութեան: Ահա այդ պատճառով ենթադրում են, որ այդ միջոցները շատ վատ և անհիշք կերպով կը դործադրվեն տեղական վարչութիւնների կող-մից: Կառավարութիւնը, սանիտարական վարչու-թեան կարգադրութեան համաձայն, պէտք է այ-րել տայ խօսերայով հիւանդացածի բոլոր շորերը և իրեղենները: Այրելով այդ բոլորը, ոչ ոք չէ վարձատրում հիւանդատիրոջ: Եւ ահա այդ պատ-ճառով հիւանդատէրերը թաղանթում են թէ իրանց տանը խօսերայով հիւանդ կայ, որպէս զի չը գան, տուել տան ու վրա չանեն դեղինֆէկցիայի հա-մար, և չայրեն իրեղենները: Հասկանալի է, որ եթէ ժողովուրդը այդպէս է նայում ձեռք առնե-լիս միջոցների վրա, այդ միջոցները կը մնան լոկ կարգադրութիւններ, և ոչինչ օգուտ չեն կա-րող տալ: Ուրախալի է, որ մի քանի դիւղերում իրանք բնակիչները իրանց գիւղացիներից պահա-պաններ են դրել և մի տեսակ կարանտին են սարքել:

Սպանիական կառավարութիւնը դանազան կար-գադրութիւններ անելով մի և նոյն ժամանակ պէտք է հօգայ մեծ քաղաքների կառաւիղա-ցիայի մասին, պէտք է բարեկարգել քաղաքների առողջական դրութիւնը:

Ֆրանսիական կառավարութիւնը միջոցներ է ձեռք առել, որ խօսերան սահմանը չանցնի: Ար-դէն բժիշկներ են ուղարկված սահմանադիրը: Արգելված է Սպանիայից պտուղներ բերել: Սա-նիտարական բոլոր միջոցները սկսել են գործ դնել:

Յունիսի 6/12-ին Հռօմում տեղի ունեցաւ սանի-տարական բարձրագոյն վարչութեան նիստը, որ-տեղ որոշված է, թէ ինչ միջոցներ պէտք է ձեռք առնել, որ Սպանիայից խօսերան չանցնի խա-ղա:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Յայտնի է որ 1892 թւին պէտք է կայանար Ամերիկայի Նիւ-Եորկ քաղաքում համաշխարհային ցուցահանդէս: Այժմ լրագիրները հաղորդում են, որ այդ ցուցահանդէսի բացվելը, Ամերիկայի նա-խագահական ընտրութիւնների պատճառով, յե-տաձգվում է մինչև 1894 թիւը:

—Հասարակաց կարծիքը Անգլիայում սաստիկ դժգոհ է Սթրեյթի միսիտարութիւնից, որովհետև այդ միսիտարութիւնը Գերմանիայի հետ կապված դաշնագրի հիման վրա դիմանում է Գերմանիային Հելզոլանդ կղզին: Այդ կղզու փոխարէն Աֆրի-կայի Պէմբա կղզին անցնում է Գերմանիայի ձեռ-քից Անգլիայի ձեռքը:

—Վերջին լուրերը ցոյց են տալիս, որ Թիւր-քիայի ասիական գաւառներում մի քանի խառնա-կուրթիւններ են պատահել, և մինչև անգամ ընդ-հարում է եղել դրեք և ժողովրդի մէջ:

—Պարիզից գրում են, որ քննիչը արձակել առեց մեղադրվող ուսու նիւիլիտաներից մի քանի-սին:

—Չէրնօգորայից գրում են, թէ յոյս կայ, որ շուտով սովի տաղանալը կանցնի, և ժողովուր-դը ուսուելու բաւարար քանակութեամբ հաց կու-նենայ:

—Անգլիական աղետամիտ մամուլը դժգոհ է լուրը Սթրեյթի դէպի Գերմանիան բռնած դրեքից: Մի քանի պահպանողական օրգաններ միայն գո-վասանդում են վերաբերվում դէպի այժմեան մի-նիստարութեան բռնած ընթացքը՝ Աֆրիկեան եր-կրների հարցի վերաբերմամբ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Եւրօպայում ծնողներից շատերը այժմ ամենին չեն միտում իրանց դասակարգին, թիւրիւրով նը-րանց կամքին, հասակ առնելուց յետոյ, ընդունել կամ չընդունել այս կամ այն դասանութիւն:

Այդպիսով երևելի ֆրանսիացի հեղինակ Ալեքսան-դըր Դիւմայի այգիին այժմ հասած լինելով 20 տարեկան հասակին, այս օրերս նոր է մկրտվել, ընդունելով կաթօլիկ դասանութիւնը:

Ամերիկայի Բուէնօս-Այրէս և Մօնտեւիդէօ քա-ղաքների մէջ կառուցվում է էլէկտրական պոստը: Մօտ 300 վերստ տարածութեան վրա կանցնեն երկու էլէկտրական թելեր, որոնց միջնորդու-թեամբ, երկու ժամկալ ընթացքում կուղարկվեն նամակներ վերայից քաղաքների միմից դէպի միւսը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԳՈՐԽԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Աթէնք, 15 յունիսի: Հայերը սպասամբվեցան և նոցա ու լուրերի մէջ տեղի ունեցան մի քա-նի ծանր ընդհարումներ, որոնց ժամանակ երկու կողմից էլ շատերը սպանվեցան:

ՊԵՏԵՐՈՎՈՐԳ, 16 յունիսի: Պետուղները, այգի-գործութեան և բանջարեղէնի համառուական ցուցահանդէսը Պետերբուրգում կը բացվի յուլիսի 23-ին և կը տևի մինչև օգոստոսի 10-ը:

ՎԼԱԴԻՎՈՍՏՈՎ, 16 յունիսի: Երէկ այստեղ հասաւ չինացի դեներալ Չօու, ընկերակցութեամբ երկու անգլիացի ինժեներներ: Այդ անձինք եր-կաթիւնային գծի հետխաղաղութիւններ արեցին Մօնթեւիդէօ: Նրանց խօսքին նայելով, չինաց կա-ռավարութիւնը ուղում է շտապանքի դէպի ուս-սաց սահմանը գիծ անցկացնելու հարցի վճիռը:

Կ. ՊՈԼԻՍ, 16 յունիսի: Թիւրք իշխանութիւնը հրամայեց դրեքին խուզարկել Երզրումի մօտ գտնու-վող եկեղեցին, ժամերգութեան ժամանակ, ենթա-դրելով որ եկեղեցում դէպքի գաղտնի պահեստ կայ: Մի հայ հրացանադար արեց թիւրք օֆիցէրին, դիմուորները սկսեցին հրացաններ արձակել հայերի վրա, որոնք պատասխանում էին արձանակներ արձակելով: 4 հայ և 8 թիւրք սպանված են, շատերը վիրաւորված են. թիւրքաց տեղեկու-թիւններին նայելով, եկեղեցու մէջ խուզարկու-թիւնը արեւ է ոչ թէ իշխանութիւնը, այլ մահմետական ազգաբնակչութիւնը: Միմիտրները խորհուրդը վճռեց չը պատասխանել թուրքական յայտադրին:

ՍՕՖԻԱ, 18 յունիսի: Պրինց Ֆերդինանդ գնաց Կարլսբադ, որտեղ մի քանի օր կը մնայ: Գնացու-առաջ նա հրատարակեց մի պրօկլամացիա՝ որով յայտնում է թէ Ստամբուլով խնամակալ է նշա-նակվել:

ԲԵՐԼԻՆ, 16 յունիսի: Կայսրը այսօր նստեց «Kaiser» զրահակիր նաւը, որը ուղեորվեց դէպի Կօպենհագէն:

ՊԱՐԻԶ, 16 յունիսի: Այն բոլոր լուրերը, որոնք հաղորդում են թէ Մարտէլում, Լիօնում, կամ Ֆրանսիական ուրիշ քաղաքներում խօսերա կայ, դուրս են որ և է հիւնքից:

ԲԵՐԼԻՆ, 16 յունիսի: Չինուղական միսիտար վերդի դիւ վերնուս հրաժարական է տալիս այն պատճառով, որ կանցելը համաժող չէ նրա պրօ-էկտի հետ:

ՎԻՆՆԱ, 17 յունիսի: Լրագիրները ոչինչ քաղաքական նշանակութիւն չեն տալիս պրինց Կօբուրգեանի ճանապարհորդութեանը: «Fremden-blatt» լրագիրը հաւատացնում է, որ պրինցը խոյս է տալիս ամեն տեսակ այցելութիւններից և կընդունի միմիայն Նաչելովին և ասպ կու-ղետովի կարլսբադ: Լուր է պատում, որ պրինցը կայցելէ Միւնխեն և դուրս կուղետովի Ֆրան-սիա: Հաստատ արեւելիներից ստացած տեղեկու-թիւններին նայելով, ենթադրում են որ պրինցի ճանապարհորդութիւնը տեղի է ունեցել Ստամբու-լովի պահանջելով, որը կամենում է սպանել տալ Պանիցային և կառավարութեան համար աղոյ դիք պատրաստել ազգային ժողովի առաջնկայ ընտրութիւնների ժամանակ:

ԼՈՒՆՈՒՆ, 17 յունիսի: Սօֆիայից «Բլայերի» գործակալութեան հաղորդածին նայելով՝ պրինց Ֆերդինանդ վաւերացրեց Պանիցայի մահվան դադալիւրը, մերթելով մահվան պատիժը 15 տար-վայ բանտարկութեամբ փոխարինելու միջնորդու-թիւնը:

ՍՕՖԻԱ, 17 յունիսի: Երէկ առաւօտեան Պանի-ցային հրացանի առանտ Առաւօտեան 9 ժամին նա ուղարկվեց այն տեղը, ուր դետղված է Սօ-ֆիայի բերդապահ դիւրի բանակը: Գատակը կարգաւուց յետոյ Պանիցան խոստովանեց և հա-ղորդեց, ապա ինքը կապեց իր աչքերը. նրան կապեցին ծառի մօտ, որին նա մօտեցաւ եռան-դոտ քայլերով: Նրա կրծքին դիպել է 21 դնտակ:

